

ԽԱՌՆ ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (IX-XI ԴԴ.)

Բագրատունիների կողմից Հայաստանի պետականության վերականգնումը նրանց ներքին և արտաքին ճկուն ու հեռատես քաղաքականության արդյունք էր: Դրա դրսևորումներից է ժամանակի հզոր իշխանական տներ Արծրունիների և Սյունիների հետ, սերտ հարաբերություններ ունենալու նպատակով, խնամիական կապերի հաստատումը:

Հայկական աղբյուրները փաստում են, որ ոչ միայն Բագրատունիների, այլև որոշ հայ իշխանական տների խնամիական կապերը միայն հայկական միջավայրով չէ, որ սահմանափակվում էին: Երբեմն հետապնդելով փոխշահավետ քաղաքական շահեր՝ դրանք հաճախ դուրս էին գալիս նաև Արաբական խալիֆայության շրջանականեր:

Քննվող խնդրի տեսանկյունից հատկապես հետաքրքրական են ինչպես խառն ամուսնությունների կանոնական-իրավական կարգավորումները, շարժառիթները, հանգամանքներն ու հետևանքները, Հայոց եկեղեցու վերաբերմունքը դրանց նկատմամբ, այնպես էլ՝ միջնադարյան իրականության ուսումնասիրությունը, ինչը շատ հաճախ կարող էր հակադրվել ինչպես գործող կանոնական-իրավական համակարգին, այնպես էլ՝ Հայոց եկեղեցու վերաբերմունքին:

V դարի երկրորդ կեսից սկսած՝ միջնադարյան Հայաստանում ամուսնությունն ամրագրվում էր եկեղեցում՝ քահանայի կող-

մից կատարվող օրհնությանը (պսակով): Դա է վկայում Շահապի-վանի եկեղեցական ժողովի (444 թ.) ընդունած Գ կանոնը¹:

Սուրբ առարկա հարցի քննության առումով հետաքրքրա-կան է նախքան այդ Լավոդիկեի եկեղեցական ժողովի (365 թ.) ըն-դունած հետևյալ կանոնը, որն ընդգրկվել է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մեջ. «Չէ մարթ ոչ յեկեղեցոյ մերոյ են ի պեսպես եւ ի ցոփ հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուստերս եւ զդստերս, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ»²:

Ի հավելումն սրա՝ Մխիթար Գոշի Դատաստանագրքում կարդում ենք. «Դատաստան ըստ կամաց կանոնաց այս լիցի այն-պիսեացն. զի թէ ի հեթանոս այլազգիս տան, եւ զրկին ի հաղորդու-թենէ, զրկեսցին, տուողոքն ի հաղորդութենէ իւրեանց, եւ եթէ ի հերձուածողս, յորոց մէք ոչ հաղորդիմք, զդատաստան խճիս ծնողքն, որք ընդ նոսա ամուսնացուցին, հատուցեն»³: Ինչպես տեսնում ենք, թեպետ Մխիթար Գոշի պնդմամբ օտարազգիների հետ խնամիական հարաբերությունները որևէ կանոնով չէին կար-գավորվում, այդուհանդերձ, դեռևս Լավոդիկեի ժողովի ընդունած կանոնն այլազգիների հետ խնամիական կապերի հաստատումը համարում է. «Չէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առ-նել կամ առ հերձուածողս, բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»⁴:

Այս հարցին անդրադարձած Սմբատ Գունդստաբլն իր հեր-թին գրել է. «Չկայ հրաման յաւրինաց, որ կարէ ի կարգաւորաց եկեղեցոյ ընդ թերահաւատ կամ ընդ այլազգի մարդոյ խնամութիւն այնել՝ ոչ ունենալ հարս եւ ոչ տալ՝ եւ թէ այնէ չլինի ընդունած, եւ

¹ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխատասիրությանը Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 432 (այսուհետև՝ Կանոնագիրք Հայոց):

² Նույն տեղում, էջ 231, տե՛ս նաև՝ Մխիթար Գոշը, Գիրք դատաստանի, աշխատասիրությանը Խ. Թորոսյանի, Երևան, 1975, էջ 99:

³ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 99:

⁴ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 236:

ոչ թողու եպիսկոպոսն, որ լինի՝ եւ տուգակին մեծ տուգանաւք իրանաւք, թէ այնէ»⁵:

Վերոշարադրյալից հետևում է, որ եթե Լավոդիկեի եկեղեցական ժողովի ընդունած կանոնը դատապարտում է օտարազգիների հետ ամուսնությունը, ապա Մխիթար Գոշն այն թողնում էր ծնողների խղճին և ակնկալում, որ նրանք պետք է հատուցեն կատարվածի համար: Ինչ վերաբերում է Սմբատ Գունդաստաբլին, ապա նա ոչ միայն դատապարտում էր խառն ամուսնությունները, այլև պատիժ էր նախատեսում պսակ կատարած եպիսկոպոսի համար: Այն առավել մեղմ էր քան մերձավորներին պսակելու դեպքում նախատեսված պատիժը: Եթե խառն ամուսնությունների դեպքում նախատեսում էր խոշոր չափի տուգանք, ապա Շահապիվանի եկեղեցական ժողովի ընդունած ԺԳ կանոնը մերձավորներին պսակելու պարագայում նախատեսում էր պատժել հոգևորականին. «... եւ ի կարգէ պաշտանէից հեռացեալ եղիցի»⁶: Վերը թվարկված կանոնները, թեպետ որևէ կերպ չէին սահմանում, կարգավորում խառն ամուսնությունները, սակայն ակնհայտ է, որ կանոնական իրավունքում դրանք դիտվում են անցանկալի, մերժելի, դատապարտելի և արգելված երևույթներ:

Կանոնական իրավունքի տեսանկյունից դատապարտելի իրողությունը՝ արաբի և առհասարակ մահմեդականի հետ խառն ամուսնությունը, չէր կարող ենթադրել նաև Հայոց եկեղեցու ծիսակարգով պսակի կատարումը, քանի որ կանոնական իրավունքն այլազգիներին համարում էր անարժան՝ Հայոց եկեղեցի մտնել?:

Միջնադարյան Հայաստանում հասարակական հարաբերությունները կարգավորվում էին ոչ միայն կանոնական իրավուն-

⁵ Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գալստյանի, Երևան, 1958, էջ 30:

⁶ Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 448:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 229:

քի սահմանած կանոններով, այլ նաև արքաների հրամաններով, որոնք ակնհայտ օրենքի ուժ ունեին: Դրանցից հետաքրքրական է Հայոց Աբաս թագավորի (928-953) այսպես կոչված «Թագաւորասաստ պայմանը» (հրովարտակը), որով արգելվում էր անգամ հունադավան եկեղեցու հետևորդների հետ ամուսնությունները. «Եւ նոյն ժամայն զհրաման թագաւորասաստ պայմանին դնէր, զի մի ոք իշխեսցէ ամուսնանալ ընդ երկաբնակսն, եւ աւագակացն զզխիհատմանն տայր վճիռ, և եկեղեցեաց զշխութեան տայր զհրաման»⁵:

Ամուսնացողների՝ միևնույն կրոնին և եկեղեցուն պատկանելու խնդիրը կարևոր էր անգամ նրանց նշանօրհներթի կամ նշանադրության ժամանակ⁶:

Այդուհանդերձ, հայկական աղբյուրներում պահպանված վկայությունները փաստում են մահմեդականների հետ հայերի խառն ամուսնությունների բազմաթիվ դեպքեր: Շնչ որում, եթե դրանք լրում են հասարակ բնակչության շրջանում կատարված խառն ամուսնությունների մասին, որոնք, անկասկած, ավելի մեծ թիվ են կազմել, ապա ազնվագարմ դասի ներկայացուցիչների վերաբերյալ պահպանվել են մի շարք արժանահավատ վկայություններ: Դրանք փաստում են ինչպես նման ամուսնությունների դրդապատճառները, այնպես էլ՝ հետևանքները:

Խառն ամուսնություններին անդրադարձած Ա. Աղոյանը թեև նշում է, որ «Միայն հասարակական և տնտեսական առտնին շահերը կարող էին դրդել հայ իշխաններին ու ֆեոդալներին մերձամուսնական կապեր ստեղծել ոչ միայն միմյանց, այլև օտարազգի

⁵ Անանիա Մոկացի Տեառն Անանիա Հայոց կաթողիկոսի յաղագս պապստամբութեան տանն Ադուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւն արտաքոյ Սուրբ Լուսաւորչի աթոռոյն, Մատենագիրք Հայոց, Ժ հատոր, Ժ դար, Երևան, 2011, էջ 259:

⁶ Տե՛ս Մխիթարյան Ա., Դսակի կարգն ըստ «Մաշտոց» ծիսական ժողովածուների, «Բանբեր Մատենադարանի», 2012, թիվ 19, էջ 76:

մեծամեծների միջև»¹⁰, այդուհանդերձ, կիսում է Մխիթար Գոշի անհանգստությունը. «Թե զնալով հայ մեծամեծները ոտնահարում են սուրբ Ավետարանի ու մանավանդ ազգի սովորույթները, երբ ամուսնանում են այլադավան կամ հեթանոս իշխանագարմերի հետ: Ամուսնական նման կապերը վերջիվերջո գալիս էին լիովին զրկելու հայ ֆեոդալներին ներքին անկախությունից, որի հետևանքները չէին կարող բացասաբար չազդել թեկուզ հայ ընտանեկան հաստատության վրա: Իմաստուն Գոշը լավ գիտեր, որ այս կարգի ամուսնական դաշնադրությունները ոչ միայն կայքի և ունեցվածքի հսկայական վատնումների հիմք էին ծառայում, այլև լայն դռներ էին բացում հայ մեծամեծների առջև զեխ ու շվայտ կյանքի համար»¹¹:

Այժմ տեսնենք, թե իրականում, խառն ամուսնություններն օտարների նվաճողական քաղաքականության տրամաբանական հետևանք էին, թե՞ միակողմանի կամ փոխշահավետ քաղաքական գործարք և ինչպիսի՞ հարաբերություններ կարող էին առաջացնել:

Վարդան վարդապետի վկայությունների համաձայն՝ Մուշեղ Մամիկոնյան իշխանի դստրերից մեկն ամուսնացել էր արաբ Ջահապի հետ «Մուշեղայ՝ երկու որդիք և չորս դստերք... և մի ի քերց ևոցա ետ զինքն յամուսնութիւն Ջահապի ումեմն իսմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա»¹²: Ջահապն իր հերթին տիրելով Արշարունիքի մի մասին «խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»¹³: Առաջին հայացքից այս ամուսնությունը կարելի է դիտել իբրև փոխշահավետ գործարք: Եթե Մուշեղի դուստրն արաբ

¹⁰ Աղոյան Ա., Հայկական ամուսնա-ընտանեկան հարաբերությունները միջնադարյան օրերներում, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 64:

¹¹ Լույս տեղում:

¹² Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ (այսուհետև՝ Վարդան վարդապետ), Վենետիկ, 1862, էջ 76:

¹³ Լույս տեղում:

ամուսնու միջոցով փորձում էր հայրական կալվածքները պաշտպանել հավանական ոտնձգություններից, ապա Ջահապը, իր հերթին, կնոջ միջոցով, դրանց լիովին տիրելու նպատակ էր հետապնդում:

Այստեղ հետաքրքրական են Ջահապի հավակնությունները՝ կնոջ հողերին տիրելը: Ինչու՞ է պատմիչն այս հանգամանքը շեշտում կամ կարևորում: Նա հիշատակում է Մուշեղի դստեր և Ջահապի ամուսնությունը Մուշեղ Մամիկոնյանի մահվանից հետո¹⁴: Այս պարագայում, կարելի է ենթադրել, որ Ջահապը կարող էր նրա տիրույթներին տիրել հեշտությամբ և անարգել, քանզի Մամիկոնյանները 774-775 թթ. ապստամբություններից հետո դուրս էին եկել քաղաքական ասպարեզից և այլևս վտանգ ներկայացնել չէին կարող: Այս խնդիրն աղերսվում է Հովհաննես Դրասխանակերտցու մի վկայությանը, որի համաձայն՝ կնոջ միջոցով նրա տոհմի հողերի մի մասին տիրել էր Սևադան. «Իսկ Սևադայ ոմն անուն ի Պարսիկ տոհմէ, - որ առեալ էր իւր կին զԱրուսեակ ի Բագրատունի տանէ և ՚ի ձեռն այնորիկ գյուղով մասն երկրիս բռնակալեալ սեպհականաբար իմն տիրէր»¹⁵: Սևադայի վերաբերյալ պատմիչի վկայությունները վերաբերում են Դավիթ Բ Կակաղեցի կաթողիկոսի աթոռակալման շրջանին (806-833):

Մուշեղ Մամիկոնյանի դստեր ու Ջահապի և Սևադայի ու Արուսյակ Բագրատունու ամուսնության վերաբերյալ Վարդան Վարդապետի ու Հովհաննես Դրասխանակերտցու վկայությունների քննությունից հետևում է, որ Ջահապը նույն Սևադան է: Ջահապ-Սևադան ամուսնացել էր Արուսյակ Բագրատունու հետ: Մույն դեպքերը տեղի էին ունեցել IX դարի սկզբին¹⁶:

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Յովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի), Թիֆլիս, 1912, էջ 113:

¹⁶ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գրիգորյան Մ., IX դարասկզբի Արշարունիքի տերերի հարցի շուրջ, ԲԵՂ, 2011, թիվ 1, էջ 26-32:

Տվյալ դեպքում մեզ համար առանձնակի հետաքրքրական է կնոջ միջոցով նրա հայրական հողերին տիրելու պարագան:

Միջնադարյան Հայաստանում կանանց սեփականության մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել¹⁷: Ազնվագարն դասի կանայք ունեին ինչպես անշարժ, այնպես էլ շարժական սեփականություն: Անշարժ սեփականության մաս էին կազմում նաև հողատարածքները՝ գյուղերը, ագարակները, այգիները և այլն: Դրանք ձեռք էին բերվում ինչպես իբրև ժառանգություն կամ օժիտ մտանալու միջոցով, այնպես էլ իրենց մերձավորների (հիմնականում ամուսինների) նվիրատվության շնորհիվ¹⁸: Երբեմն հանդիպում էին նաև ինքնուրույն գործարքների կնքման միջոցով անշարժ սեփականության ձեռքբերման դեպքեր¹⁹:

Նշված ժամանակաշրջանում IX դարի սկզբին, Բագրատունի իշխանական տոհմի ներկայացուցիչները երկրում ունեին լուրջ քաղաքական կշիռ և արաբների նվաճողական ճգնաժամները հանդիպում էին նրանց համար դիմադրությանը: Այս էր պատճառը, որ արաբները հաջողության հասնելու համար օգտագործում էին նաև հայ իշխանուհիների հետ խառն ամուսնությունները: Ավելին, նրանք դրանով հետապնդում էին առավել հեռահար նպատակներ՝ իրավական հիմքերի վրա դնել հայկական հողերի նկատմամբ իրենց իրավունքները:

Փաստորեն Ջահապ-Մևադայի այս հավակնություններն են արտացոլված պատմիչների վկայություններում: Հատկապես, որ IX դարի առաջին կեսին Արաբական խալիֆայությունը վերստին

¹⁷ Տե՛ս Պատմություն ևահանգին Միսական արաբալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան), Թիֆլիս, 1910, էջ 174-175, 229-230, 291, տե՛ս նաև՝ Ալիշան Ն. Շիրակ. Տեղագրութիւն-պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 113 և այլն:

¹⁸ Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 218-219:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 174-175:

ճանաչել էր հայ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները²⁰ և հայրական տիրույթների նկատմամբ այդպիսի իրավունքներ կարող էին ունենալ նաև կանայք:

Այս միտումը որոշ չափով նկատելի է նաև Սյունիքի իշխան Վասակի դստեր և պարսիկ Բաբեկի (վերջինս Ատրպատականում ծավալված խուռամյան շարժման առաջնորդն էր – Մ. Գ.) ամուսնության պարագայում: Վասակի մահվանից անմիջապես հետո նրա դստերը կնության է առնում Բաբեկը և դրա շնորհիվ աներոջ տիրույթներն առնում իր իշխանության տակ²¹: Այստեղ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Բաբեկը միայն Վասակի մահվանից հետո է ամուսնանում նրա դստեր հետ: Հետևաբար Վասակը կենդանության օրոք գուցե թույլ չտար այս միությունը, կամ Բաբեկը թերևս այս ամուսնությամբ իրավական հիմքերի վրա դրեց Վասակի տիրույթներին տիրանալը:

Հայկական հողերի նկատմամբ իրենց իրավունքները, օրինականացնելուց զատ, խառն ամուսնությունների հետևանքով արաբների ու հայ ազնվականների միջև նկատվեցին նաև մի շարք այլ հարաբերություններ:

Այս առումով ուշադրության են արժանի Հայոց իշխան (826-851) Բագարատ Բագրատունու քրոջ և Բաղեշի ամիր Մուսա իբն Ջուրարայի, Արուսյակ Բագրատունու և Սևադա-Ջահապի ինչպես նաև Մմբատ I-ի (890-914) եղբոր՝ Շապուհի, դստեր և Ատրպատականի Մաջյան ամիր Աֆշինի ամուսնությունները:

²⁰ Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Հայ նախարարների հողատիրական իրավունքները VII-IX դարերում ըստ խալիֆայության պայմանագրերի, «Հողվածների ժողովածու», Երևան, 2003, էջ 297:

²¹ Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վ. Մաթեյանի, Երևան, 1983, էջ 326; Մտեֆանուս Օրբելյան էջ 158:

Խլան ամուսնություններով պայմանավորված, հայ կանայք, հարկ եղած դեպքում, միջամտում էին երկրի ներքին գործերին՝ նպատակ ունենալով պաշտպանել իրենց ամուսինների շահերը:

Այսպես, օրինակ, Հայոց իշխան Բագարատ Բագրատունին քրոջը կնության էր տվել Արզնի և Բաղեշի ամիր Մուսա իբն Ջուրարային²²: Սակայն դա չխանգարեց, որ վերջինս գործով ներխուժի աներոդդուն պատկանող Տարուն: Աշոտ Բագրատունին օգնության կանչեց Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունուն: Նրանք միացյալ բանակով Մշո դաշտում ջախջախեցին Մուսա իբն Ջուրարայի զորքին, որի մնացորդներն ամրացան Բաղեշի բերդում: Նրանք գլխովին կոչնչացվեին, եթե Բագարատի քրոջ աղերասանների շնորհիվ չներվեին²³:

Արուսյակ Բագրատունու և Ջահապ-Սևադայի ամուսնությունը հետաքրքրական է նաև ինամիական համագործակցության առումով: Արմինիայի արաբ կառավարիչ Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանիի դեմ ապստամբած Ջահապ-Սևադայի համախռնների թվում պատմիչը հիշատակում է նաև Հայոց սպարապետ Մմբատ Բագրատունուն, Սյունյաց գահերեց իշխան Սահակին և այլոց²⁴: Այսինքն, ընդհանուր թշնամու դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունը կամ ընդհանուր վտանգը միավորել էր հայ իշխաններին ու Սևադա-Ջահապին: Ասվածը փաստվում է նաև պատմիչի մեկ այլ վկայությամբ, որի համաձայն Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ ալ-Շայբանին Հայոց կաթողիկոս Դավիթ Կակաղեցուն (806-833) իբրև պատվիրակ, ուղարկում է Ջահապ-Սևա-

²² Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի և Անանուն), Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան 2006, էջ 125, Տարաբի, Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, հաւաքեց և թարգմանեց Բ. Խալաթեանց, Վենետիկ, 1919, էջ 97:

²³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 125:

²⁴ Տե՛ս Լուվիանես Դրասխանակերտցի, էջ 113-114:

դայի, Մմբատ սպարապետի և Սյունյաց գահերեց իշխան Մահակի մոտ: Չնայած Ջահապ-Սևադան ամուսնացել էր Արուսյակ Բագրատունու հետ և կնոջ միջոցով տիրել հայկական հողերին, այդուհանդերձ նա չէր ստվերում հայ իշխանների հեղինակությունը: Հայոց սպարապետը և Սյունիքի տերերը չէին կորցրել իրենց հեղինակությունը: Հենց սրանով կարելի է պատճառաբանել Խալիդ իբն Յագիդ իբն Մագիադ ալ-Շայբանի՝ կաթողիկոսին նրանց երեքի մոտ ուղարկելը:

Մմբատ I- ի և Ատրպատականի կառավարիչ Աֆշինի միջև կնքված դաշինքի չխախտման երաշխիքներից մեկն էլ Աֆշինի և Հայոց արքայի եղբոր դստեր ամուսնությունն էր²⁵:

Թվարկված երեք ամուսնությունները, ունենալով բացառապես քաղաքական շարժառիթներ, առաջացրեցին տարբեր հարաբերություններ. օտարազգի ամուսնու քաղաքական շահերի պաշտպանություն, խնամիական համագործակցություն և հաշտության պահպանման երաշխիք:

Խառն ամուսնություններից ծնված զավակներից որոշները, մահմեդական հայր ունենանլով հանդերձ, հարել են քրիստոնեությանը: Մուսա իբն Ջուրարայի մահվանից հետո նրա որդին՝ Ադձնիքի տեր Աբու-լ-Մադրան, որը Բագարատ Բագրատունու քրոջ որդին էր, փեսայացել էր Արծրունիներին և ծածուկ քրիստոնյա դարձել²⁶: Նրա ամուսնությունը ևս քաղաքական ենթատեքստ ուներ: Բացի այն, որ Աբու-լ-Մադրան, Արծրունյաց տոհմից կին առնելուց հետո վերադարձել էր իր հայկական արմատներին, այլև Շայբանիների վերահաս սպանալիքների պարագայում կարող էր ապստիանել Արծրունիների աջակցությանը²⁷:

²⁵ Տե՛ս նույն տեղում էջ 180:

²⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 59:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

նույնը չենք կարող պնդել Անիի ամիր Մանուչեի և «ի տանե Բագրատունի...»²⁸ Կատայի ամուսնությունից ծնված Աբու-լ-Ասվարի պարագայում: Նա խիստ թշնամաբար էր տրամադրված հայերի ու քրիստոնեության նկատմամբ և անգամ հասել է Անիի մայր տաճարի խաչը²⁹: Փոխարենը նրա որդիներից մեկը, պատանի հասակում իմանալով, որ իր տատը՝ Կատան, «ի տանե Բագրատունի՝ քրիստոնեայ էր», քրիստոնեություն է ընդունում³⁰:

IX-XI դդ. խառն ամուսնություններն այսքանով չեն սահմանափակվում: Կարելի է հանդիպել նաև այլ ազգի ներկայացուցիչների հետ խառն ամուսնությունների բազմաթիվ դեպքերի:

Այսպիսով, ի մի բերելով վերը նշյալը, կարելի է եզրակացնել, որ IX-XI դդ. միջնադարյան կանոնական իրավունքում խառն ամուսնություններն որակվում էին իբրև անցանկալի, մերժելի և դատապարտելի երևույթներ, որոնք որևէ կերպ չէին սահմանվում և կարգավորում: Հայոց առաքելական եկեղեցու կողմից ևս խառն ամուսնությունները մերժելի էին, եկեղեցու ծիսակարգով պսակը՝ բացառելի:

Այդուհանդերձ այլ էր միջնադարյան իրականությունը: Նշված ժամանակաշրջանում միջնադարյան Հայաստանում խառն ամուսնությունները տարածված երևույթ էին, ժամանակի հրամայական, փոխշահավետ գործարք կամ հողատիրական իրավունքներն իրավական հիմքերի վրա դնելու միջոց:

²⁸ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 123:

²⁹ Տե՛ս Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Ա (Ե-ԺԲ դար), Երևան, 1934, էջ 218:

³⁰ Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 123:

**СМЕШАННЫЕ БРАКИ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ
(IX-XI ВВ.)****РЕЗЮМЕ**

В средневековом каноническом праве IX-XI веков смешанные браки считались нецелесообразным, отвергнутым и порицаемым явлением. Армянская апостольская церковь также имела свое подчеркнуто отрицательное отношение к смешанным бракам. Духовная организация отвергала их, а церковный обряд исключал такое бракосочетание. Тем не менее, средневековая реальность была иной. В обозначенный период смешанные браки были обычным явлением, необходимостью, средством узаконить права на землю или взаимовыгодной сделкой.

MARIAM GRIGORYAN**MIXED MARRIAGES IN MEDIEVAL ARMENIA
(IX-XI CC.)****SUMMARY**

Mixed marriages were qualified as an inexpedient, rejected and damnable phenomenon by the Canon Law of the IX-XI cc. in medieval Armenia. The Armenian Apostolic Church also had its accented negative attitude towards mixed marriages. The spiritual organization rejected them and the church ritual excluded such a marriage. However, the medieval reality was different. Mixed marriages were an ordinary phenomenon in the specified period, an imperative, a means to inherit landowner's right or they were mutually beneficial deals.